Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

01.08.23

Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցնել **0.25** տոկոսային կետով՝ սահմանելով **10.25%**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ **11.75%**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ **8.75%**

2023 թ. հունիսին 12-ամսյա գնաճը շարունակել է արագորեն նվազել և կազմել է -0.5%: 12-ամսյա բնականոն գնաճը նույնպես զգալիորեն դանդաղել է՝ կազմելով 1.5%:



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկ

Արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունները շարունակում են թուլանալ:

2023 թ. երկրորդ եռամսյակում համաշխարհային տնտեսությունում պահպանվել է ցածր տնտեսական ակտիվությունը, և 12-ամսյա գնաճը շարունակել է նվազել: Այդուհանդերձ, գործընկեր բոլոր երկրներում, աշխատաշուկաներից ածանցվող գնաճային ճնշումների պահպանման պայմաններում, կոշտ գներով աչքի ընկնող ապրանքների և ծառայությունների գները դեռևս մնում են բարձր:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում կշարունակեն վարել զսպող դրամավարկային քաղաքականություն: Ֆինանսական խիստ պայմանների ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում գները նվազում են: Արդյունքում՝ արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունները շարունակում են թուլանալ:

Գնաճը գործընկեր երկրներում, %



Աղբյուրը՝ Երկրների կենտրոնական բանկեր

Պարենային ապրանքների միջազգային գներ, (2019/12 = 100)



Աղբյուրը՝ www.fao.org

2023թ-ի երկրորդ եռամսյակում ՀՀ-ում արձանագրվել է սպասվածից բարձր տնտեսական ակտիվություն

...որին շարունակել են նպաստել շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճերը:

Կապիտալի, աշխատուժի և զբոսաշրջության մեծ ներհոսքի պայմաններում պահպանվող արտաքին բարձր պահանջարկը և տնտեսությունում եկամուտների ավելացումը նպաստել են պահանջարկի ընդլայնմանը:

Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2023Q2)



Ծառայությունների արտահանում, մլն ԱՄՆ դոլար



Մասնավոր հատվածի անվանական աշխատավարձ, տ/տ աճ, %



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի գնահատական

Արտաքին հատվածից գնաճային ազդեցության էական թուլացման, իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության և դրամի արժևորման արդյունքում գնաճային միջավայրը ՀՀ-ում շարունակում է արագ տեմպով մեղմվել:
Այնուամենայնիվ, բարձր պահանջարկի և գնաճային սպասումների պայմաններում ծառայությունների և որոշ ապրանքների գնաճը ճշգրտվում է համեմատաբար դանդաղ տեմպերով:

Հիմնական ապրանքախմբերի գնաճ, եռ/եռ տարեկանացված, %



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

... նպատակահարմար է գտնում քաղաքականության տոկոսադրույքը իջեցնել 0,25 տոկոսային կետով

... հետևողական է լինելու լինելու համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի կարգավորում և գնաճային սպասումների կայունացում

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2023թ. օգոստոսի 15-ը հրապարակվելիք մամուլի հաղորդագրությունում (Տոկոսադրույքի արձանագրություն)